ներկայ էին: Նրանք գաղտնի են վայելում թէ իրանց սէրը եւ թէ փոխադարձ յարգանքը: Սրահում հայրը տեսաւ իր աղջկան, որ նստած գործում էր: Մօտեցաւ, ձեռքը գգոանքով քսեց նրա մազերին եւ անցաւ: Լսելի եղաւ եկեղեցու կոչնակի ձայնը: Կարծես մի մարդ խթեց տէր հօր կողքին, նա իսկոյն զարթնեց: Նրա երեք անգամ հազալու ձայնը արդէն նշան էր իր զարթնելուն: Հարսը շուտով տեղից վեր կացաւ, մօտեցաւ, սկսեց օգնել նրան հագնուելու: Աչքերի բացուելու հետ, բացուեցաւ եւ տէր հօր բերանը, սկսեց ինչ-որ սաղմոս մրթմրթալ: Մրթմրթում էր նա հագնուելու ժամանակ, մրթմրթում էր նա լուացուելու ժամանակ, մրթմրթում էր նա երեսը սրբելու ժամանակ, եւ այդ անվերջ սաղմոսը շարունակուեցաւ, մինչեւ մօրուքը եւ գլխի մազերը սանրեց: Հարսը ամենայն կամակատարութեամբ ցոյց էր տալիս իր ծառայութիւնները: Այժմ համարեա ընտանիքի մեծ մասը ոտքի վրայ էր: Մնացել էին մի քանի երեխաներ, որոնք բոլորը մի վերմակի տակ քնած էին: Դրանք է սատանայի նման դուրս վազեցին իրանց անկողնից եւ, միայն կարճ շապիկները հագներին, պպզեցին օջախի շուրջը: Խիստ ծիծաղելի էր տեսնել, թէ որպիսի՜ ախորժակով ականջ էին դնում մեծ պտոյկի մէջ եփուող կերակուրի ձայնին: Նրանք առանց գիտենալու, թէ ի՞նչ է եփւում, արդէն սկսեցին միմեանց հետ վիճել: Մէկը ասում էր՝ հաւի ջնաղը իմն է, կարծելով, թէ հարիսայ է, միւսը ասում էր ոչխարի ճանը իմն է, կարծելով, թէ խաշ է. երրորդը ծաղրում էր նրանց, թէ ոչ ջնաղ կայ եւ ոչ ճան. որովհետեւ եփուողը քեշկեկ է: Երեխաների վէճը դեռ շարունակւում էր, երբ տէր հայրը առեց գաւազանը, պատրաստւում էր դուրս գալ: Այդ միջոցին ես ձայն տուեցի.

— Ես էլ կը գամ:

— Ու՞ր:

— Եկեղեցի:

— Օրհնեալ լինիս, գնանք միասին:

Նա մի փոքր համբերեց, մինչեւ ես պատրաստուեցայ:

Դուրս գալով սրահը, ես վերջին անգամ նայեցի օրիորդի գեղեցիկ գորգի վրայ, վերջին անգամ նայեցի եւ նրա գեղեցիկ երեսին: Նա կարմրեց, ինչպէս այն վարդագոյն ծաղիկը, որ այդ րոպէում կազմում էր գորգի վրայ:

Աղօթարանը (արեւելքը) դեռ չէր լուսաւորուել. գիշերային խաւարը դեռ ամէն ինչ ծածկել էր իր սեւ թեւքերի տակ: Գիւղի մէջ տիրում էր խորին լռութիւն. միայն հեռուից լսելի էր լինում նիրհող ծովի խուլ շնչառութիւնը: Մենք անցնում էինք ոլոր-մոլոր փողոցներով, աւելի ճիշտ կը լինէր ասել, կտուրների վրայով: Տէր հայրը դեռ շարունակում էր մրթմրթալ իր անվերջ սաղմոսը: